

գերեզմանատեղիներ բացուած են: Այս գերեզմանին սեփականատէր ռուսերը մատուռի վերածած են զայն փոքրիկ գմբէթով մը: Նոյն գերեզմաններուն խակութիւնը երաշխաւորելու և անոնց վաւերականութեան վստահելու համար տեղագրական ստոյգ տուիքները տկար են և վաւերագիրները շատ հազուադիւտ: Այժմեանիկին նուիրուած եկեղեցի մը կառուցուած է անոր գերեզմանէն ոչ հեռու: Ոմանք կը կարծեն, բայց առանց ապացոյցի, թէ այս կնոջ բնակարանը կը գըտնուէր միևնոյն տեղը (D. Bl. էջ 1640, Բառ. Joppé):

Զատիկի Դ. Կիւրակէին, անյիշատակ ժամանակներէ, Յոպպէի բնակիչները կ'երթան Այժմեանիկին գերեզմանը՝ տօնելու համար յիշատակը այս առատածեոն այրի կնոջ՝ որ Ս. Պետրոսի ձեռքով յարութիւն առաւ: (Bar. gd. էջ 26): Յոպպէի արևելքը, Medjdel-yabahi մէջ արձանագրութիւն մը կը յիշեցնէ Ս. Կիրակոսի նուիրուած եկեղեցի մը (R. Bl. 1893, էջ 190):

Սուրբ Յակոբայ սիրնին տեղոյն աւանդութիւնը. — Յովհաննէս եպոս. Երուսաղէմացի կ'աւանդէ Յոպպէի ծովեզեքը Ս. Յակոբայ սիրնին տեղը հետեւեալ տողերով. «Ի հարաւակողմն Եաֆայու յեզր ծովուն՝ է տեղի սեանն, յորում մեծագգի սպանիացի կինն որ առեալ էր յերուսաղէմէ զանգլուխ մարմին Ս. Յակոբայ, և բերեալ ի Եաֆա՝ գաղտ յումեքէ ի սիրնն կայեալ որ էր խարսխեալ ի մէջ ջրոյն, և ի հրեշտակաց բարձեալ եղև սիրնն այն հանդերձ սուրբ մարմնով առաքելոյն հրամանաւն Աստուծոյ, և տարեալ հրեշտակացն ի Սպանիա՝ եղին յեզր ջրոյն մերձ քաղաքի նոցա: Եւ կոյր ոմն ելեալ ի քաղաքէն եկն յեզր գետոյն առ ի լուանալ զերեսն, եւ շօշափեաց զսուրբ